

Հանրային քննարկման հրավեր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021թ. հունիսի 03-ին, ժամը 11:00-ին՝ ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, փ. Գ. Նժդեհ 26 հասցեում գտնվող Շենգավիթ համայնքապետարանի վարչական շենքում տեղի կունենան «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից իրականացվող «Մուսալեռ» 220կՎ օդային գծի միացումը «Երևանի ՋԷԿ» ենթակայանին ծրագրի շրջանակներում կազմված 2.63կմ երկարություն ունեցող 220կՎ «Մուսալեռ»-«ԵրՋԷԿ» օդային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական հաշվետվության վերաբերյալ 4-րդ հանրային քննարկումները:

Վերոնշյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական հաշվետվությունը հրապարակված է www.hven.am կայքում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ 099-10-15-68: